ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2024 թվականի N 285– Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հունվարի 10-ի N 7-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 22-ին կայացած նիստի N 20 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 64 /վաթսունչորս/ քաղաքացիների՝ սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 3 305 000 /երեք միլիոն երեք հարյուր հինգ հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-10-23 09:03:55 GMT+4
Հավաստված է EՍԵՆԳ-ի կողմից

2024թ. հոկտեմբերի 22
ք.Իջևան